տպագրիչի հիշատակարանը, որ ձեռագրերի նմանությամբ սովորաբար լինում է հնատիպ գրքերի վերջին էջի վրա։

Գրքի մանրազնին հետազոտությունը մեզ հնարավորություն տվեց պարզելու, որ դա հենց Հովհաննես Տերզնցու տպագրած Սաղմոսարանն է։ Դրան նախ նպաստեց Տերզնցու և նրա որդու այն լուսանկարը, որ Գ. Զարպհանալյանը, Թեոդիկը, Գ. Լևոնյանը և մյուսները նկարագրելով Հովհաննես Տերզնցու Սաղմոսարանը, բերում են իրենց աշխատություններում։ Նրա վերևի մասում փոքրատառ և մեծատառ տառանիշերով տպագրված է. «Յիշա զմեզ տեր յորժամ գաս արքայութեամբ քո և ողորմեա մեզ—Տէր Հովհաննէս Տէրզնցին և որդին Խաչատուրն ծառայք Աստուծոյ և յիշողացս։ Ամէն». իսկ ցածում՝ «փ» զարդագրով «Յիշատակարան է սակաւիկ. փառք ամենասուրբ երյրսր թէ (երրորդութեան) հօր և ...»։

Այդ հիշատակարանների տառանիշերը և զարդագիրը մենք համեմատեցինք Մատենադարանին հանձնված Սաղմոսարանի տառանիշերի ու «փ» զարդագրի հետ և գտանք, որ դրանք նույնն են։ Ապա ուսումնասիրելով հիշյալ Սաղմոսարանը մենք հանդիպեցինք երկու փոքրիկ հիշատակագրությունների։

Նկ. 3. Հովհաննես Տերզնցին իր որդի՝ Խաչատուրի հետ

Իր հրատարակած գրքերի զանազան էջերի վրա Հովհաննես Տերզնցին ձեռագիր արտագրող գրիչների նմանությամբ, սովորություն ուներ մանր հիշատակագրություններ գրելու (այդ բանը առաջին անգամ նկատեցինք «Տոմար Գրիգորյանը» թերթելիս)[3]։ Եվ ահա Սաղմոսարանի մեջ ևս պահպանվել են նման մի քանի հիշատակարաններ։ Գրքի «զ» մամուլի 2-րդ էջում, գլխազարդից էլ վեր, տպագրված է հազիվ նկատելի հետևյալ հիշատակարանը. «Մեղաւոր Տէրզնցին յիշա՛ ի տէր», իսկ «ժզ» մամուլի 7-րդ էջի տեքստի տակը տպագրված է. «Մեղաւոր Տէրզնցին յիշեա՛ ի տէր աստուած, սիրելի և քաղցր եղբարք իմ և տէր մեր յիսուս քրիստոս»։

Մեր համեմատությունների արդյունքներն, առավել ևս այս երկու հիշատակարանները ապացուցեցին, որ Սաղմոսարանն իրոք Հովհաննես Տերզնցու տպագրածն է։ Այն հավանաբար տպագրվել է Տերզնցու բանտից դուրս գալուց հետո։

Սաղմոսարանի տպագրությունն իրականացնելու համար նրան օգնում են Վենետիկում բնակվող հայ խոջաները, ինչպես դա վկայում է Գ. Զարպհանալ-

---

3 «Տոմար Գրիգորիեան Յավիտենականց»-ը նույնպես հաղվագյուտ գիրք է։ Այդ գրքի «բ» մամուլի 7-րդ էջում կա հետևյալ հիշատակարանը. «Եւ զիս զաշխատողս զչտէր յովանէս տէրզնցին և զվերակացու գործոյս զպարոն սուլթանշահն Յաղօթս ձեր սուրբ յիշման արծանի առնէք, աղաչեմք ըղնեղ»։ «ը» մամուլի 3-րդ էջին «Զթելագիրս զիաչիկն զորդիակս յիշեցէք ի տէր, ծառայս ձեր չտէր յովհանէս Տէրզցին յիշեցէք ի տէր»։ Նույն գրքի մի այլ ուշագրավ հիշատակարանում գրված է. «Զփծուն գրիչս զչտէր Յովհաննէս Տէրզնցիս զղեխեալս մեղօք մի ողորմայիւ արժանի առնէք զձեզ աղաչեմք»։